ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«09» 07 2024 թ.
№ ԳԿԱՊ-24/Լ-1081

«Մեգաօֆիս» ՍՊԸ (ՀՎՀՀ 01264917)
գ. Փարաքար, Թայրով Մայրաքաղաքային 200
հեռ.099-73-21-61, 091300533
էլ. փոստի հասցե՝ tender@megaoffice.am

ՀՀ պաշտպանության նախարարության և «Մեգաօֆիս» ՍՊ ընկերության (այսուհետև՝ Ընկերություն) միջև 19.02.2024թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-23-8/3-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում (Համաձայնագիր N1, առ 10.05.2024թ.) Ընկերությունը մինչև 2024թ. հունիսի 10-ը պետք է մատակարարեր 30 հատ Չհրկիզվող պահարաններ:

ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալին 10.06.2024թ. ներկայացրած գրության համաձայն Ընկերությունը հրաժարվում է կնքված պայմանագրի շրջանակներում 6-րդ չափաբաժնով նախատեսված 30 հատ Չհրկիզվող պահարաններ ապրանքատեսակի մատակարարումից:

Հիմք ընդունելով վերոգրյալը ՀՀ պաշտպանության նախարարությունը 2024թ. հուլիսի 9-ին միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը չմատակարարված ապրանքի մասով:

Տեղեկացնում եմ, որ «Մեգաօֆիս» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 13050 ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.3 կետի համաձայն), տույժը հաշվարկված է մինչև 10.06.2024թ., ինչպես նաև Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում ենթակա է գանձման պայմանագրի կատարման ապահովման գումարը՝ 360000 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը՝ 540000 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև **2024թ. հուլիսի 18-ը** ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված **360000** ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և **540000** ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա «Մեգաօֆիս» ՍՊ ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև **2024թ. հուլիսի 18-ը** ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2075 սենյակ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ